Գաղտնի

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Ինեկոբանկ" ՓԲԸ
2020թ. հուլիսի "29"-ի
խորհրդի նիստում
Արձանագրություն թիվ 245
խորհրդի նախագահ՝

_____Ա. Բալոյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ակտի կոդ	14-ORD-05

Հաստատող մարմին	Խորհուրդ
Որոշման N	245
Որոշման ամսաթիվ	29.07.2020
Խմբագրության համար	04
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	05.08.2020
Վերանայման N	01
Որոշման համար	256
Վերանայման ամսաթիվ	02.06.2023
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	05.06.2023
Ուժը կորցնելու ամսաթիվ	

Պատասխանատու		Ֆինանսական ծառայություն
	Անուն, Ազգանուն	**Ստորաբաժանում**
Համաձայնեցված է	Հայկ Ոսկանյան	Ֆինանսական տնօրեն
	Արշալույս Սահակյան	Գլխավոր հաշվապահ
	Անատոլի Տիրոսյան	Կորպորատիվ քարտուղար
	Տիգրան Զիլֆինյան	Ներքին աուդիտի ղեկավար
	Աշխեն Տիգրանյան	ՓԼ/ԱՖ Դեմ պայքարի և ՀԱ բաժին
	Լիլիթ Սահակյան	Հաշվետվությունների բաժին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անվանում	Էջ
1. Նպատակ	3
2. Կիրառման ոլորտ	3
3. Օգտագործվող փաստաթղթերի ցանկ	3
4. Հավելվածներ	3
5. Սահմանումներ և հապավումներ	3
6. Նկարագրություն	4
6.1 Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մասին որոշում	4
6.2 Հրապարակային մրցույթի անցկացման մասին ծանուցում	4
6.3 Հրապարակային ծանուցմամբ փոփոխությունները և լրացումները	5
6.4 Մրցութային հանձնաժողովը	5
6.5 Մրցույթի հայտերին ներկայացվող պահանջները և դրանց ներկայացման կարգը	6
6.6 Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը	6
6.7 Մրցույթի հայտերի բացումը և արդյունքների ամփոփումը	6
6.8 Մրցույթի միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները	7
6.9 Չկայացած և անվավեր մրցույթներ	8
7.Փոփոխությունների պատմություն	8
Հավելված 1	9
Հավելված 2	10
Հավելված 3	13

1 Նպատակ

Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է սահմանել անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության սկզբունքները և ընտրության իրականացման գործընթացը:

2 Կիրառման ոլորտ

Սույն Կարգով սահմանված պահանջները կատարվում են անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության գործընթացում ներգրավված Բանկի աշխատակիցների կողմից:

3 Օգտագործված փաստաթղթերի ցանկ

- ISO 9001:2000
- ՀՀ օրենսդրություն
- ՀՀ ԿԲ իրավական ակտեր
- Բանկի ներքին իրավական ակտեր

4 Հավելվածներ

Հավելված 1	Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար իրականացվող մրցույթի անցկացման հայտարարություն
Հավելված 2	Անկախ աուդիտորական կազմակերպության գնահատման թերթ
Հավելված 3	Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության և աուդիտորական խմբերի նկատմամբ նվազագույն պահանջների ցանկ

5 Սահմանումներ և հապավումներ

Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ.

Արտաքին աուդիտ՝ Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրով նշված Բանկի գործունեության ոլորտի անկախ ստուգումն է՝ այդ ոլորտի վերաբերյալ տեղեկատվության արժանահավատության և ռիսկերի վերաբերյալ անկախ կարծիք արտահայտելու նպատակով, որն իրականացվում է աուդիտորական եզրակացություն տրամադրելու միջոցով.

Աուդիտորական կազմակերպություն՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող իրավաբանական անձ, որն իրավունք ունի մատուցելու աուդիտորական ծառայություններ.

Աուդիտորական եզրակացություն՝ աուդիտորական կազմակերպության կողմից կազմած փաստաթուղթ է՝ աուդիտի ստանդարտներին համապատասխան, որում արտահայտվում է կարծիք աուդիտի ոլորտի վերաբերյալ, որը ստորագրվում է պատասխանատու աուդիտորի կողմից և հաստատվում աուդիտորական կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և, առկայության դեպքում, կնիքով.

Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր կամ պատասխանատու աուդիտոր՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից.

Աուդիտորական խումբ՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որն անմիջականորեն ընդգրկված է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ.

Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություններ՝ http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ.

Հրապարակային մրցույթի մասնակիցներ՝ հրապարակային մրցույթի միջոցով համապատասխան պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած կազմակերպություններ:

6 Նկարագրություն

6.1 Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մասին որոշում

6.1.1 Բանկը, իրավական ակտերով սահմանված կարգով, կարող է ներգրավել աուդիտորական կազմակերպություն՝ ինչպես կամավոր, այնպես էլ պարտադիր աուդիտ իրականացնելու նպատակով:

6.1.2 Պարտադիր աուդիտ իրականացնելու ցանկացած անհրաժեշտության դեպքում աուդիտ իրականացնող կազմակերպությունն ընտրվում է սույն կարգի պահանջներին համապատասխան և ընթացակարգով:

6.1.3 Կամավոր աուդիտ իրականացնելու որոշումը կայացվում է ըստ անհրաժեշտության: Կամավոր աուդիտի դեպքում սույն կարգով սահմանված մրցութային ընթացակարգերի պահպանման հարցը որոշվում է Գործադիր տնօրենի կամ Ֆինանսական տնօրենի ներկայացմամբ և Խորհրդի հաստատմամբ: Այն դեպքում, երբ Խորհրդի կողմից որոշում է ընդունվում ընտրությունն իրականացնել առանց սույն կարգի պահանջների ապահովման, ապա ընտրությունն իրականացվում է՝ պահպանելով գնումների գործընթացը կանոնակարգող Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

6.1.4 Պարտադիր աուդիտ իրականացնելու նպատակով Բանկի Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը յուրաքանչյուր տարի որպես կանոն, նախքան Խորհրդի կողմից տարեկան ժողովի օրակարգի հաստատումը, խորհրդի քննարկմանն է ներկայացնում նաև անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության հարցը:

6.1.5 Պարտադիր աուդիտի դեպքում, եթե առկա չէ Կարգով և օրենսդրությամբ սահմանված սահմանափակող հանգամանք, խորհուրդը Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովին կարող է առաջարկել վերահաստատել այն աուդիտորական կազմակերպությանը, որը նախորդ անգամ իրականացրել է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտը կամ իրականացնել նոր ընկերության ընտրություն:

6.2 Մրցութային հանձնաժողովը

6.2.1 Մրցույթի կազմակերպման, մրցույթին մասնակցելու հայտով ներկայացվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկի սահմանման, հայտերի ստացման, հավաքագրման, բացման, գնահատման, Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովին հայտերի ներկայացման համար ձևավորվում է մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որը պատասխանատու է նաև մրցույթի ընթացքում մրցույթի անցկացման օրինականության ապահովման, նիստերի արձանագրությունների և այլ փաստաթղթերի պահպանման և արխիվացման համար:

6.2.2 Հանձնաժողովը ունի հետևյալ կազմը.
- Գործադիր տնօրեն,
- Ֆինանսական տնօրեն,
- Գլխավոր հաշվապահ:

6.2.3 Կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով, որպես մասնագետներ, հանձնաժողովի որոշմամբ կարող են ներգրավվել Բանկի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները, ինչպես նաև նշանակվել հանձնաժողովի նիստերի արձանագրող: Մրցույթի ընթացքում ձևավորված բոլոր փաստաթղթերը ենթակա են արխիվացման և պահպանության՝ համաձայն Բանկի Փաստաթղթերի արխիվացման գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտի:

6.3 Հրապարակային մրցույթի անցկացման մասին ծանուցում

6.3.1 Բանկի Խորհրդի որոշման վերաբերյալ Խորհրդի աշխատակազմի տեղեկացման հիման վրա Ֆինանսական ծառայության կողմից, համաձայնեցնելով Բանկի հաղորդակցությունների ստորաբաժանման հետ, պատրաստվում է Հրապարակային մրցույթի հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարությունը (Հավելված 1))՝ ուղղված բոլոր ցանկացող աուդիտորական կազմակերպություններին, որոնք բավարարում են Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության և աուդիտորական խմբերի նկատմամբ նվազագույն պահանջների ցանկով (Հավելված 3) ներկայացված պահանջներին:

6.3.2 Հայտարարության տեքստը հաստատվում է Հանձնաժողովի կողմից, հրապարակում է http://www.azdarar.am հասցեում գտնվող հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և Բանկի կայքում՝ մրցույթի հայտերի ընդունման վերջին օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

6.3.3 Հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին ճանաչելու օրը անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել մրցույթի մասնակիցներից ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

6.4 Հրապարակային ծանուցմամբ փոփոխությունները և լրացումները

6.4.1 Մրցույթի պայմաններում, ինչպես նաև մրցույթի հայտերը բացելու օրվա և ժամի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Բանկը պարտավոր է հայտարարության (Հավելված 1) մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և/կամ լրացումներ (այսուհետ՝ հայտարարության փոփոխություն):

6.4.2 Հայտարարության փոփոխությունների մասին ծանուցումն իրականացվում է այն ձևով, ինչպես կատարվել էր մրցույթի մասին ծանուցումը:

6.4.3 Հայտարարության փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը:

6.4.4 Հայտարարության մեջ փոփոխություններ կատարելու դեպքում մասնակիցներն իրավունք ունեն սույն Կարգով սահմանված ձևով մրցութային հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: Բանկը հայտարարության փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

6.4.5 Հայտարարության փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հայտարարության մեջ նշված էական պայմանները:

6.5 Մրցույթի հայտերին ներկայացվող պահանջները և դրանց ներկայացման կարգը

6.5.1 Մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները, մրցույթի մասին հայտարարությամբ ներկայացված պահանջներին համապատասխան Բանկ են ներկայացնում մրցույթի հայտեր:

6.5.2 Մրցույթի փաթեթները Բանկի փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունվում և առանց բացելու Գործավարության գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտին համապատասխան գրանցվում են Մտից փաստաթղթերի գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, մասնակցի անվանումը, մրցույթի հայտի փոփոխության կամ հայտերի հետ կանչման մասին:

6.5.3 Մրցույթի մասնակիցների մրցութային հայտերը մինչև Հանձնաժողովի հատուկ նիստը պահպանվում են Բանկի Գլխավոր հաշվապահի կողմից, որը պատասխանատու է դրանց պահպանության և արխիվացման համար:

6.6 Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը

6.6.1 Մրցույթի մասնակիցների կողմից մրցույթին մասնակցելու հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերի ցանկը սահմանվում է հանձնաժողովի կողմից:

6.6.2 Մրցույթի մասնակիցների կողմից, հրապարակային մրցույթին մասնակցելու հայտի ծրարով, ներկայացվում են մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող պայմանները, մասնավորապես, աուդիտի ընդգրկման բնագավառները, աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետներն ու աուդիտի իրականացման արժեքը, հայտարարությամբ պահանջվող բոլոր այլ տեղեկությունները և փաստաթղթերը, այլ պայմանները (հրապարակային մրցույթով կնքվելիք պայմանագրի էական պայմանների առաջարկը):

6.6.3 Սույն Կարգով սահմանված և մրցույթի պահանջներին ակնհայտորեն չհամապատասխանող մրցույթի հայտերը մերժվում և վերադարձվում են ներկայացնողին՝ առանց բացելու:

6.6.4 Բանկը պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների այն ծախսերի համար, որոնք պայմանավորված են մրցույթի նախապատրաստման և հայտերի ուղարկման համար՝ անկախ մրցույթի արդյունքներից:

6.6.5 Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտը կարող են փոխել կամ հետ կանչել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխումը կատարվում է սույն կանոնակարգով սահմանված մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով "փոփոխում" բառը:

6.7 Մրցույթի հայտերի բացումը և արդյունքների ամփոփումը

6.7.1 Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվում են հանձնաժողովի հատուկ նիստում՝ մրցույթի մասին հայտարարությամբ նախատեսված օրը և ժամին, հայտերն ընդունելու վերջին օրվանից առնվազն երեք օր հետո:

6.7.2 Մրցութային հանձնաժողովը Անկախ աուդիտորական կազմակերպության գնահատման

թերթերի (Հավելված 2) ամփոփ գնահատականների հիման վրա ընտրում է առաջարկված մրցութային պայմաններից լավագույնը:

6.7.3 Մրցույթի հայտերն ամփոփելու օրը հանձնաժողովը որոշում է մրցույթի հաղթողի անունը (անվանումը) և կազմում մրցույթի արդյունքների ամփոփման արձանագրություն, որտեղ նշվում են՝

- մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների, նիստին մասնակցող հրավիրված անձանց և մասնագետների անունները, ազգանունները և պաշտոնները,
- մրցույթի մասնակիցների անվանումները, հասցեները և գտնվելու վայրը,
- Անկախ աուդիտորական կազմակերպությունների գնահատման թերթերով (Հավելված 2) տրված ամփոփ գնահատականները,
- մրցույթում հաղթողի (հաղթողների) անվանումը,
- այլ անհրաժեշտ տեղեկություններ:

6.7.4 Արձանագրությանը կցվում են նաև լրացված Անկախ աուդիտորական կազմակերպությունների գնահատման թերթերը (Հավելված 2):

6.7.5 Մրցույթի արդյունքներն ամփոփելու և մրցույթի հաղթողին ճանաչելուց հետո հանձնաժողովը արձանագրությունը ներկայացնում է Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովին՝ մրցույթի արդյունքում ընտրված արտաքին աուդիտորների նշանակման, ներառյալ՝ արտաքին աուդիտորի վարձատրության հարցերի քննարկման և Խորհրդին առաջարկներ ներկայացնելու նպատակով՝ համաձայնեցնելով այն մրցույթում հաղթած մասնակցի հետ:

6.7.6 Աուդիտորական կազմակերպության հաստատումը կատարվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ Խորհրդի առաջարկությամբ, իսկ մատուցվող ծառայությունների վերջնական արժեքը որոշվում և հաստատվում է Բանկի Խորհրդի կողմից:

6.7.7 Մրցույթի մասնակիցների և նրանց ներկայացուցիչների ցանկությամբ նրանց կարող են տրամադրվել մրցույթի արդյունքների ամփոփման արձանագրության պատճենները:

6.8 Մրցույթի միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները

6.8.1 Մրցույթի արդյունքները Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատելու պահից մրցույթի հաղթողը ձեռք է բերում Բանկին աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետև պայմանագիր) կնքելու իրավունք:

6.8.2 Բանկը և մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը պայմանագիրը պետք է ստորագրեն մրցույթի ավարտից և Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատումը ստանալուց հետո՝ Բանկում գործավարության կազմակերպման գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտին համապատասխան:

6.8.3 Մրցույթում հաղթողի հետ համապատասխան պայմանագիր կնքելիս պայմանագրի էական պայմանները պետք է համապատասխանեն մրցույթի մասին հայտարարությամբ սահմանված պայմաններին և հայտերի քննարկման ժամանակ հարցումների և դրանց պատասխանների հիման վրա մրցույթի հաղթողի հետ ձեռք բերված համաձայնություններին:

6.8.4 Աուդիտորական կազմակերպությունը Բանկի հետ կնքվող պայմանագրով պետք է համաձայնություն տա Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու Բանկի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

6.9 Չկայացած և անվավեր մրցույթներ

6.9.1 Հանձնաժողովը չկայացած (անվավեր) է համարում մրցույթը և/կամ որոշում է կայացնում նոր մրցույթ հայտարարելու մասին կամ եթե օրենսդրական սահմանափակումներ առկա չեն, նախորդ աուդիտորական կազմակերպությանը վերահաստատելու առաջարկ ներկայացնելու մասին, եթե՝

- ոչ մի հայտ չի ներկայացվել,
- ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության և աուդիտորական խմբերի նկատմամբ նվազագույն պահանջների ցանկում (Հավելված 3) նշված պահանջներին,
- արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված ծառայությունների մատուցումը:

6.9.2 Մրցութային հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը (հայտերի ամփոփման օրը) իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց՝ այդ կապակցությամբ կայացնելով պատճառաբանված որոշում:

6.9.3 Բանկը մրցույթ անցկացնելուց հրաժարվելու դեպքում չի կրում մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

7. Փոփոխությունների պատմություն

Գործողություն (վերանայում/ խմբագրում)	Ամսաթիվ	Հաստատող մարմին	Որոշման համար	Մշակող/ ներկայացնող	Փոփոխությունների նկարագիրը
Խմբագրություն 03	13.06.2013թ	Խորհուրդ	162	Է. Ավետիսյան	Ավելացվել է 6.1 կետը, Խմբագրվել է 6.4.2 ենթակետը Հեռացվել է 8.5.6 ենթակետը:
Խմբագրություն 04	29.07.2020թ.	Խորհուրդ	245	Ա. Բաղրյան՝ Գործադիր տնօրենի աշխատակազմ	Ընդհանուր վերանայում
Խմբագրություն 04.01	28.07.2021	Խորհուրդ	256	Ա. Բաղրյան՝ Գործադիր տնօրենի աշխատակազմ Հ. Ոսկանյան՝ Ֆինանսական տնօրեն Ա. Տիգրանյան՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և ՀԱ բաժին	Փոփոխվել է 6.1 կետը՝ կամավոր աուդիտի մասով
Խմբագրություն 04.02	02.06.2023	Խորհուրդ	274	Է.Վարդանյան	Վերահաստատվել է առանց փոփոխության

Հավելված 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
"Ինեկոբանկ" ՓԲԸ ——————————— վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար անցկացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Տեղեկացնում ենք Ձեզ, որ "ԻՆԵԿՈԲԱՆԿ" ՓԲԸ հայտարարում է "ԻՆԵԿՈԲԱՆԿ" ——————————— վերստուգման համար աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով անկացվող հրապարակային մրցույթի անցկացման մասին, որի արդյունքում հաղթողի հետ կկնքվի ——————— աուդիտի իրականացման պայմանագիր:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև …../…./……. ժամը …… ……հասցեով ներկայացնել մրցույթին մասնակցելու դիմում և անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը(այսուհետ բոլորը միասին՝ մրցութային հայտ).

- մրցույթի մասնակցի վերաբերյալ տեղեկություններ (լրացվում է համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների),
- աուդիտորական գործունեության լիցենզիայի պատճեն,
- ՀՀ-ում մասնակցի աուդիտի անցկացման փորձի, ներառյալ հայտարարությամբ պահանջվող ոլորտում ստուգումների անցկացման փորձի վերաբերյալ տեղեկություններ,
- աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների աշխատանքային փորձը և որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները:
- մրցույթի պայմաններ (մրցույթի արդյունքում հնարավոր կնքվելիք պայմանագրի էական պայմանների տեխնիկական և ֆինանսական առաջարկ),
- այլ (լրացվում է համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների)

Մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը պետք է ներկայացվեն փակ, սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով:
Մրցույթի հայտի ծրարի վրա պետք է կատարվեն հետևյալ գրառումները.

- մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն),
- մրցույթի անվանումը,
- "մրցութային առաջարկ" և "չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը" բառերը,
- մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցութային հայտերը կբացվեն .../.../…….թ. ժամը …. ……. հասցեով:
Մրցութային հայտերը կամփոփվեն .../.../……թ. ժամը … ……հասցեով:
Մրցույթի հաղթողը որոշվում է "ԻՆԵԿՈԲԱՆԿ" ՓԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
Մրցույթի անցկացման կարգին ծանոթանալու համար կարող եք դիմել …… հասցեով:
Մինչև մրցույթին հաղթողի ճանաչելու օրը մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի մասնակիցներից պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:
Բանկն իրավունք ունի մինչև հաղթողին որոշելու օրը իրականացնել սույն Հայտարարության փոփոխություն կամ հրաժարվել մրցույթի անցկացումից: Հայտարարության փոփոխության, ինչպես նաև մրցույթ անցկացնելուց հրաժարվելու դեպքում Բանկը չի կրում մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

Հավելված 2

Անկախ աուդիտորական կազմակերպության գնահատման թերթ[1]

	Գնահատման չափանիշներ	Միավորը	Մեկնաբանություն (Գնահատվում է 0-ից 3 միավոր, ամենաբարձր միավորը 3-ն է)
Տեխնիկական չափանիշներ	1.Աուդ.կազմակերպության ՀՀ ճանաչվածության աստիճանը		1) Վերջին 5 տարիների ընթացքում իրականացրել է ՀՀ 5 բանկի և/կամ ապահովագրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ 3 2) Վերջին 5 տարիների ընթացքում իրականացրել է ՀՀ 3-4 բանկի և/կամ ապահովագրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ՝ 2 3) Վերջին 5 տարիների ընթացքում իրականացրել է ՀՀ 1-2 բանկի և/կամ ապահովագրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ՝ 1 4) Չի իրականացրել՝ 0
	2. Աուդ.կազմակերպության միջազգային ճանաչվածության աստիճանը		1) Հանդիսանում է Միջազգային ճանաչում ունեցող աուդիտ. կազմ-ն՝ 3; 2) չի հանդիսանում Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություն, բայց ունի միջազգային առնվազն 10 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ՝ 2: 3) չի հանդիսանում Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություն, բայց ունի առնվազն 5 միջազգային բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ՝ 1: 4) Չի համապատասխանում վերև նշված չափանիշներից և ոչ մեկին՝ 0
	3.Աուդ.կազմակերպության աշխատանքային փորձը		10 տարուց բարձր՝ 3; 5-10 տարի՝ 2; 3-5 տարի՝ 1:

[1] Այն դեպքում, երբ աուդիտի նպատակը Բանկի ֆինանսական հաշվետվությունների անկախ ստուգումը չէ, գնահատման չափանիշները համապատասխանեցվում են աուդիտի ենթակա ոլորտի ստուգման պահանջներին:

	4.Աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակը և աշխատանքային փորձը		1) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը ունի աուդիտորական կազմակերպությունում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) բոլոր փուլերը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական), իսկ պատասխանատու աուդիտորը՝ նաև առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ՝ 3; 2) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը ունի աուդիտորական կազմակերպությունում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ, իսկ պատասխանատու աուդիտորը՝ նաև առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ ՝ 2; 3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը ունի աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում, իսկ պատասխանատու աուդիտորը՝ ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական)՝ 1:
	5.Աուդ.եզրակացության ներկայացման ժամկետները		
	6.Աուդիտի ընդգրկման բնագավառները		
Ընդամենը՝			

Ֆինանսական չափանիշներ	Աուդիտի ծառայության արժեքը		Գնահատվում է՝ 0-ից 1 միավոր, 1՝ ամենաբարձրն է, մնացածը՝ տասնորդականներով:
	Հարկերը և այլ ծախսերը		
Ընդամենը՝			
Ամփոփ գնահատականը			
Տեխնիկական չափանիշներ			
Ֆինանսական չափանիշներ			
Վերջնական միավոր			

Հավելված 3

Անկախ աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ նվազագույն պահանջների ցանկ[2]

Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերստուգման նպատակով հայտարարված հրապարակային մրցույթին կարող են մասնակցել այն անկախ աուդիտորական կազմակերպությունները, որոնք բավարարում են հետևյալ պահանջներին՝

1) Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ.
   Այս չափանիշը չի տարածվում Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա,
2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ),
3) աուդիտորական կազմակերպության աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում:

Արտաքին աուդիտի իրականացման մրցույթին չեն կարող մասնակցել

1) տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին բանկում անընդմեջ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը իրականացրած պատասխանատու աուդիտորը,
2) "Աուդիտորական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետում նշված աուդիտորները,
3) անվճարունակ և/կամ լուծարման գործընթացում սնանկ ճանաչված աուդիտորները:

[2] Այն դեպքում, երբ մրցույթը հայտարարվում է ոչ Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերստուգման նպատակով, պահանջները սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ աուդիտի ենթակա ոլորտի առանձնահատկություններից կախված: